ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 52. Պրոբացիայի ծառայությունը

1. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-283-Ն)***

2. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական և տարածքային մարմիններից: Պրոբացիայի ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

3. Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմինը բաղկացած է բաժիններից, որոնց կազմում կարող են գործել բաժանմունքներ:

4. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմիններ են պրոբացիայի ծառայության մարզային (Երևանի քաղաքային) մարմինները, որոնց կազմում կարող են գործել բաժիններ:

4.1. Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ:

5.***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-283-Ն)***

6. Պրոբացիայի ծառայությունում ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման միջոցով:

7. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Պրոբացիայի ծառայողները կարող են կրել համազգեստ:

8. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների, համազգեստի և կրծքանշանի նկարագիրը, ինչպես նաև համազգեստ և կրծքանշան կրելու կարգը հաստատում է համապատասխան նախարարը:

(52-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-283-Ն)